ենթակա է հրապարակման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորվաթիայի Հանրապետություն (ք. Զագրեբ)

2019 թ. մայիսի 27-ից մայիսի 29-ը գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Սուսաննա Սաֆարյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Զագրեբ (Խորվաթիայի Հանրապետություն), 2019թ. մայիսի 27-ից մայիսի 29-ը

4. Հրավիրող կողմը

ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպություն (ՄԱԿ ԶՀԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 64-րդ նիստին և «Զարգացում, նորարարություն և գործընկերություն» խորագրով աշխատաժողովին մասնակցություն

6. Քննարկված թեմաները

ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 64-րդ նիստի և «Զարգացում, նորարարություն և գործընկերություն» խորագրով աշխատաժողովի ընթացքում քննարկվել է 2018-2019թթ. աշխատանքային ծրագրով նախատեսված

աշխատանքների կատարման ընթացքը և 2020-2021թթ. աշխատանքային ծրագիրը ինչպես նաև զբոսաշրջության ոլորտի առաջնահերթությունները, տարածաշրջանային զարգացման ծրագրերը:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հայաստանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահ Սուսաննա Սաֆարյանի, մասնակցել է ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 64-րդ նիստին և «Զարգացում, նորարարություն և գործընկերություն» խորագրով աշխատաժողովի աշխատանքներին:

Նիստին մասնակից երկրների կողմից ընտրվել են ՄԱԿ ԶՀԿ տարբեր օրենսդիր և օժանդակ մարմիններում ներկայացուցիչներ (Գլխավոր ասամբլեայի փոխնախագահ, Եվրոպական հանձնաժողովի նախագահ, Եվրոպական հանձնաժողովի երկու փոխնախագահներ, անդամներ Հավատարմագրման հանձնաժողովում, Ծրագրային և բյուջետային հանձնաժողովում, Զբոսաշրջության և կայունության հանձնաժողովում, Վիճակագրության և զբոսաշրջության արբանյակային հաշիվ համակարգի հանձնաժողովում, Զբոսաշրջության և մրցունակության հարցերով հանձնաժողովում, Աֆիլացված անդամների անդամակցության հայտերի վերանայման հանձնաժողովում):

ՄԱԿ ԶՀԿ Գործադիր խորհրդի անդամների թափուր տեղերի ընտրության շրջանակներում առաջադրվել էին հետևյալ 8 երկրները՝ Բուլղարիա, Խորվաթիա, Ֆրանսիա, Վրաստան, Իտալիա, Մոնտենեգրո, Պորտուգալիա, Թուրքիա:

Հայաստանը քվեարկել է Վրաստանի, Իտալիայի, Մոնտենեգրոյի, Պորտուգալիայի օգտին:

Արդյունքում Գործադիր խորհրդի անդամներ են ընտրվել հետևյալ երկրները՝ Ֆրանսիա, Իտալիա, Պորտուգալիա, Թուրքիա:

Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ.

- ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղար Զուրաբ Պոլոլիկաշվիլի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ անդամ պետությունների հետ համագործակցության համակարգող Բեկա Ջակելիի հետ,

- ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամների վարչության ղեկավար, դեսպան Իոն Վիլկուի հետ,
- Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության զբոսաշրջության ազգային ադմինիստացիայի ղեկավար Մարիամ Կվրիվիշվիլի հետ,
- Հունաստանի զբոսաշրջության նախարարության զբոսաշրջության և քաղաքականության զարգացման հարցերով գլխավոր քարտուղար Ջորջ Տզիալլասի հետ,
- Միջազգային կոնգրեսի և կոնվենցիայի ասոցիացիայի (ICCA) գլխավոր գործադիր տնօրեն Սենտիլ Գոփինաֆի հետ,
- Միջազգային կոնգրեսի և կոնվենցիայի ասոցիացիայի (ICCA) Եվրոպայի տարածաշրջանի տնօրեն Էլիֆ Բալցի Ֆիսունօղլուի հետ

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել նաև եվրոպական այլ երկրների զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների հետ, ձեռք են բերվել պայմանավորվածություններ զբոսաշրջության բնագավառում երկկողմ համագործակցության ընդլայնման, զբոսաշրջության կայուն զարգացման հնարավորությունների ուղղությամբ:

Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Սուսաննա Սաֆարյան 31.05.2019

Safaryan